ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/63» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 04-ը մայիսի 2017թ
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան,
գնահատողներ՝
ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչության իրային ծառայության պահեստների, տեխնիկական միջոցների և բաղնիք-լվացքատնային սպասարկման բաժանմունքի պետ, փոխգնդապետ Ա. Սարկիսյան,
ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի թիկունքային ապահովման վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. ՈՒստյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության ավագ սպա, մայոր Ա. Հակոբյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյան,
Գնումները համակարգող՝
Գնումները համակարգող նշանակել ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Ա.Մաղաքյան:

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/63» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

1. Տեղեկություններ հայտ /գնային առաջարկ/ ներկայացրած և չներկայացրած մասնակիցների մասին.
2.«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/63» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հարցում պարունակող հայտերի կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հարցման պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին
4.Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/63» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին:
5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «Անկողնային պարագաների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/63» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1.	«ՖիրմաԼիդա» ՍՊԸ
2.	Ա/Ձ Աշոտ Ազիզյան Ազատի

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2 .«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/63» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հարցում պարունակող էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հարցման պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով /հարցումով/ պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերը առկա են:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/63» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով /հարցումով/ սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ ներքոհիշյալ դեպքի. .

- **Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ի** կողմից ներկայացված էլեկտրոնային հայտի N 3.1 հավելվածում (հայտարարություն մասնագիտական փորձառության մասին) մասնակցի կողմից նշվել է, որ նախորդող տարիներին, որպես նմանատիպ իրականացրել է հանդերձանքի մատակարարման պայմանագրեր, այնինչ ընթացակարգի հրավերով, որպես նմանատիպ են սահմանվել անկողնային պարագաների և սպիտակեղենի մատակարարման պայմանագրերը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը: Անհրաժեշտ է սույն ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով (վերը նշված որոշման 46-րդ կետ) մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ծանուցմանն ի պատասխան սահմանված ժամկետում մասնակցի կողմից ներկայացվեց հետևյալ պարզաբանումը. *Հանդերձանք և անկողնային պարագաները, ըստ գնումների աջակցման կենտրոնի շրջանակային համաձայնագրերի ցանկի, մտնում են նույն խմբի մեջ և համարվում են նմանատիպ տնտեսական գործունեություն, որի արդյունքում չեն առանձնացվում հանդերձանք և անկողնային պարագաների խմբերի և կնքվում է մի պայմանագիր: Մենք էլ հաշվի առնելով սույն փաստը 3.1 հավելվածը լրացրել ենք ըստ կնքված պայմանագրի անվանումի: Գտնում ենք, որ մեր կողմից ներկայացված 3.1 հավելվածը ձեզ ներկայացվել է օրենքից ելնելով: Հաղթող ճանաչվելու դեպքում մենք կներկայացնենք, որպես նախկինում կատարված աշխատանքներ, հանդերձանքի մատակարարման պայմանագիր, որը բխում է օրենքից:*

Քննարկելով մասնակցի կողմից ներկայացված պարզաբանումը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց, մասնակցի կողմից ներկայացված N 3.1 հավելվածով ներկայացված հայտարարությունը գնահատել հարվերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Անվանում	Հ/Մ	Քանակ	Ընդհանուր գումար /դրամ/ նախ. գին	«ՖիրմաԼիդա» ՍՊԸ		Ա/Ձ Աշոտ Ազիզյան Ազատի		1-ին տեղ /հաղթող զբաղեցնող մասնակ
					ԱԱՀ-ով	առանց ԱԱՀ-ի	ԱԱՀ-ով	առանց ԱԱՀ-ի	
1.	Ներքնակներ /Ներքնակ (200x90)սմ/	հատ	130	520,000	1,357,200	1,131,000	858,000	715,000	Ոչ շահավետ առաջարկ
2.	Ներքնակներ /Ներքնակ (200x140)սմ/	հատ	4	24,000	55,200	46,000	39,600	33,000	Ոչ շահավետ առաջարկ
3.	Ներքնակներ /Ներքնակ (200x160)սմ/	հատ	18	126,000	274,320	228,600	183,600	153,000	Ոչ շահավետ առաջարկ
4.	Ներքնակներ /Ներքնակ (200x180)սմ/	հատ	32	256,000	551,040	459,200	422,400	352,000	Ոչ շահավետ առաջարկ
5.	Բարձ՝ բամբակյա /Բարձ՝ սիտեպոնից/	հատ	150	450,000	360,000	300,000	**351,000**	**292,500**	Ա/Ձ Աշոտ Ազիզյան Ազատ

6.	Վերմակներ /Վերմակ (210x150)սմ/	հատ	140	980,000	1,159,200	966,000	**924,000**	**770,000**	Ա/Ձ Աշոտ Ազիզյան Ազատ
7.	Անկողնային սպիտակեղեն /Սպիտակեղեն գույնավոր/	լրակազմ	130	780,000	--	--	132,6000	1,105,000	Ոչ շահավետ առաջարկ
8	Անկողնային սպիտակեղեն /Սպիտակեղեն սպիտակ/	լրակազմ	120	600,000	--	--	864,000	720,000	Ոչ շահավետ առաջարկ

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Քանի որ ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/63» ծածկագրով ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 7-րդ, 8-րդ չափաբաժինների մասով առաջարկած գները գերազանցում են պատվիրատուի՝ տվյալ գնման համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի պահանջները, գների նվազեցման նպատակով **19.05.2017թ.** ժամը 10:[40]-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) նշանակվեցին բանակցություններ: Բանակցությունը ներկայացավ միայն «ՖիրմաԼիդա» ՍՊԸ-ի տնօրենը: Վարված բանակցությունների արդյունքում մասնակիցը 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով չհամաձայնվեց նվազեցնել գները, ուստի հանձնաժողովի որոշեց մերժել «ՖիրմաԼիդա» ՍՊԸ-ի հայտը նախահաշվային գնից բարձր գին առաջարկելու հիմքով:

3.4 Հիմք ընդունելով նշված հանգամանքը հանձնաժողովը որոշեց՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի /հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին/:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/63» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

4.1 **.05.2017թ.** «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/63» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի 5-րդ և 6-րդ չափաբաժիններում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց Աշոտ Ազիզյան Ազատի Ա/Ձ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/63» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ շրջանակային համաձայնագրերրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3.1 կետով նախատեսված փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց **ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե** ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետով նախատեսված համապատասխան հարցում ներկայացնել առաջին և երկրորդ տեղեր զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/63» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման պահանջին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Հանձնաժողովի նախագահ՝	Վ. Գասպարյան
Գնահատող՝	Ա. Սարկիսյան
Գնահատող՝	Գ. Ուստյան
Գնահատող՝	Ա. Հակոբյան
Գնահատող՝	Կ. Բրուտյան
Գնումները համակարգող՝	Ա. Մաղաքյան